# Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 152

**ք. Երևան** **10.12.2018թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ մշակույթի 02/14.2/8114-18, ՀՀ բնապահպանության 4/02.2/40109-18, ՀՀ գյուղատնտեսության ԳՊ/ԱԲ-1/8587-18, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների 02ՏԱ/22.1ՀԲ/7358-18, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների 03/16.3/9422-18, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 05/14.1/18229-18 նախարարությունների, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/5781-18 և ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ԱՊ/6640-18 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Անգեղակոթ** բնակավայրի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Սիսիան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող **0.1301 հա,** որից բնակավայրերի նպատակային նշանակության հողերից՝ 0.1286 հա (0.0887 հա բնակելի կառուցապատման հողեր, կադաստրային ծածկագիր՝ 09-013-0031-0003-ից և 0.0399 հա այլ հողեր, կադաստրային ծածկագիր՝ 09-013-0031-0001-ից) և էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերից՝ 0.0015 հա էներգետիկայի հողեր (կադաստրային ծածկագիր՝ 09-013-0031-0002) փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության (ալրաղաց):

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Ռ. Մինասյան

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԳԵՂԱԿՈԹ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Հաշվի առնելով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին>> թիվ 168-Ն հրամանը, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 2018 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 152 դրական եզրակացությունն ու նկատի ունենալով Վաղարշակ Մարտիրոսյանի 2018 թվականի սեպտեմբերի 20-ի Սիսիանի համայնքի ղեկավարին ողղված դիմումը անհրաժեշտ է Սիսիան համայնքի Անգեղակոթ բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել հետևյալ փոփոխությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերից 0.0399հա (կադաստրային ծածկագիր՝ 09-013-0031-0001-ից) բնակելի կառուցապատման 0.0887հա (կադաստրային ծածկագիր՝ 09-013-0031-0003-ից) էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքային հողերի՝ նպատակային նշանակության էներգետիկայի 0.0015 (կադաս-Պտրային ծածկագիր՝ 09-013-0031-0002) փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության:

Հողամասում առկա ալրաղացի շենքը համաձայն ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի փետրվարի 2-ի թիվ ՍԴ1/0732/02/17 վճռի պատկանում է Ա/Ձ Վաղարշակ Մարտիրոսյանին, սակայն կադաստրային քարտեզում առկա անճշտության պատճառով հնարավոր չէ նրան հատկացնել շենքի սպասարկման համար անհրաժեշտ հողամասը և իրականացնել գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում: Ա/Ձ Վաղարշակ Մարտիրոսյանի կողմից ներկայացվել է ալրաղացի շենքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթուղթը: Համայնքի վարչական տարածքում առկա հողօգտագործումները կարգավորելու համար կադաստրային քարտեզում առկա անճշտություն ենթակա է ուղղման:

Քաղաքաշինության և տնտեսության

ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. Հովհաննիսյան

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԳԵՂԱԿՈԹ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Սիսիանի համայնքի Անգեղակոթ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում առաջարկվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերից 0.0399հա (կադաստրային ծածկագիր՝ 09-013-0031-0001-ից) բնակելի կառուցապատման 0.0887հա (կադաստրային ծածկագիր՝ 09-013-0031-0003-ից) էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքային հողերի՝ նպատակային նշանակության էներգետիկայի 0.0015 (կադաստրային ծածկագիր՝ 09-013-0031-0002) փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակությա փոխադրելուն հավանություն տալու մասին Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Սիսիանի համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Քաղաքաշինության և տնտեսության

ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. Հովհաննիսյան